

Երկրի ներսում տիրում էր խաղաղութիւն: Մի փորձ եղաւ միայն ներքին խռովութիւններէ՝ 1920 թ. սկզբին Կարսի շրջանի մահմետական որոշ տարրերի կողմից, բայց շարժումը անմիջապէս ճնշուեց հայկական զօրքի կողմից:

Նրանից յետոյ Կարսի շրջանում տիրեց կարգ կանոն: Շնորհիւ իշխանութեան վարած խելացի քաղաքականութեան՝ ուուս եւ մահմետական ազգաբնակիւթիւնը կամաց-կամաց կապուամ էր պետութեան հետ:

(Շարունակելի)

Հայ Քաղաքական Մտքի Դեգերումները

Գրեց՝ Ռ. ԴԱՐԻՆԵԱՆ

I

Հին վէճ ՄԸ, ՈՐ ԱՅԺՄԷԱԿԱՆ Է



Սկի տասներկու տարի առաջ, 1910 թ., Պոլսոյ «Ազատամարտ» թերթին մէջ «Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ իր քաղաքականութիւնը՝

Թուրքիոյ մէջ» երկար յօդուածաշարքով մը ես փորձ մը ըրած էի հրապարակային վերագնահատութեան ենթարկելու կարգ մը սկզբունքներ ու գաղափարներ, որոնք մեր քաղաքական ղեկավար շրջանակներու աշխարհահայեցողութեան հիմքը դարձած էին եւ որոնք մինչեւ այսօր ալ կը շարունակեն տակաւին մնալ անոնց պաշտօնական տեսարանութեան եւ հաւատոյ հանդանակը:

Իմ յայտնած միտքերը այն ատեն բաւականին յուզում առաջ բերին: Եւ անոնք, որ այն ժամանակ կը հետեւէին մամուլին, կը յիշեն անշուշտ մեր հանդուցեալ ընկեր Շահրիկեանի կրքոտ առարկութիւններն ու քանակէճը ինձ հետ իմ արծարծած խնդիրներու շուրջը:

Իմ պաշտպանած տեսակէտը այն էր, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը ընկերվարական գործունէութեան համար հող չունի Թուրքիոյ, հետեւաբար նաեւ Հայաստանի մէջ. որովհետեւ հոն չի կայ կապիտալիստական խոշոր տնտեսութիւն, չի կան անոր ստեղծագործ բովէն դուրս եկած արդիւնաբերող դասակարգեր՝ ճարտարարուեստական բանուորութիւն եւ պուրժուազի, չի կայ եւ չի կարող ըլլալ դասակարգային պայքար, սոցիալիստական ի-

մաստով. մէկ խօսքով չի կան առարկայական այն պայմանները, որոնց մէջ սոցիալիստական կազմակերպութիւն մը ի վիճակի ըլլայ իրագործելու Եւրոպայէն առնուած ընկերվարական ծրագիրները:

Ես ըսած էի այն ատեն, թէ ընկերվարութիւնը մեր երկրի իրականութեան մէջ քաղաքական կենդանի եւ այժմէական գործ մը չէ, այլ ճեմարանական ուսմունք մը, սոսկ գաղափարական հոսանք մը, որ ունի առայժմ կըրթիչ, դաստիարակիչ նշանակութիւն, այն ալ գլխաւորապէս մտաւորական շրջանակներու համար:

Ես ըսած էի նաեւ, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը մեր երկրի ընկերային-տնտեսական ներկայ պայմաններու մէջ կոչուած է գերազանցապէս ազգային ազատական (լիպերալ) գործ կատարել, պահպանելով հանդերձ իր ընկերվարական գաղափարաբանութիւնը (իդէոլոգիան):

Վերջապէս, ես պաշտպանած էի այն միտքը, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր պատմական ծագումով, իր կատարած քաղաքական դերով, իրեն յարած ժողովրդական զանդուածներու իշխող մտայնութեամբ ու ձգտումներով, ինչպէս նաեւ մեր երկրի քաղաքական ու տնտեսական պայմաններէն թելադրուած քայլերով եղեր է եւ է իրապէս ազգային ազատական կուսակցութիւն մը, որ իր գաղափարաբանութեամբ միայն ընկերվարական է: Եւ ազգային ազատական տարրը կուսակցութեան մէջ փաստօրէն միշտ եղեր է գերակշռող եւ պիտի լինի, որքան ատեն որ մեր երկրի